«ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ» ԿԱՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՍԵՐՆԴԱՅԻՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝ ԸՍՏ ՐԱՖՖՈՒ*

Սոնա Սաղաթելյան, Վահան Ենգիդունյան

Բանալի բառեր՝ ազգ, ազգային-ազատագրական պայքար, սերունդ, երիտասարդություն, էնտելեխիա, փորձ, հիշողություն:

Միջսերնդային փոխհարաբերությունների խնդիրը շարունակում է մնալ ոչ միայն արևմտյան սոցիոլոգիայի, այլև հայ հասարակագիտական մտքի առանցքային թեմաներից մեկը: Սերունդն այն վերլուծական միավորն է, որը կարող է դիտարկվել իբրև ժամանակի և սոցիալական իրականության ախտորոշման ցուցիչ: Ներսերնդային և միջսերնդային փոխհարաբերությունների արդի դրսևորումների սոցիոլոգիական իմաստավորման շրջանակներում առանձնակի կարևորություն է ստանում վերջիններիս պատմական հիմքերի վերհանումը, ինչը հնարավորություն է տալիս տեսնելու սերունդների փոխհարաբերությունների փոխակերպումների խորքային գործոնները և միտումները: Այդ դիտանկյունից հատկապես ուշադրության են արժանի 19-րդ դարի ներսերնդային և միջսերնդային գործընթացների ուսումնասիրությունները, որոնց հանդեպ հետազոտական հետաքրքրությունը պայմանավորվում է երկու գործոններով՝ ներգիտական և սոցիալ-պատմական: Առաջին դեպքում խոսքը ժամանակաշրջանի հանդեպ հետաքրքրությունը պայմանավորող էնդոգեն (ներգիտական) գործոնների մասին է, որոնք թույլ են տալիս դիտարկել այդ պատմական շրջանը՝ իբրև հայ հասարակագիտական մտքի գեներացման, ինչպես նաև ներսերնդային և միջսերնդային փոխհարաբերությունների իմաստավորման տեսական ռեսուրսների ձևավորման ժամանակաշրջան: Միևնույն ժամանակ այդ շրջանի հանդեպ հետազոտական հետաքրքրությունը պայմանավորված է հայ հասարակության զարգացման սոցիալ-պատմական առանձնահատկություններով, որոնց շարքում առավել հատկանշական են տնտեսական և հոգևոր ոլորտների փոխակերպումները, ազգային պետականության բացակայության պատմական հանգամանքները, որոնք մեծապես նպաստեցին ներսերնդային և միջսերնդային փոխհարաբերությունների նոր տիպերի ձևավորմանը[1]:

19-րդ դարի հայ երիտասարդության սերնդային փոխհարաբերությունների մեկնաբանություններ ենք գտնում Գրիգոր Արծրունու[2] և Երվանդ Լալայանի[3] աշխատություններում, որոնցում քննության են առնվում սերնդային փոխհարաբերությունների դինամիկայի խնդիրները՝ կրթության, ավանդույթների պահպանման ու փոխանցման համատեքստում: 19-րդ դարի հայ իրականության փոփոխվող պայմաններում սերունդների փոխհարաբերությունների առանձնահատկությունների հետ կապվող հարցադրումներն առաջ են քաշվում հատկապես Ռաֆֆու «Հայ կինը և հայ երիտասարդությունը» աշխատությունում, որն առանձնանում է խնդրի ձևակերպման և մեկնաբանման ուրույն մոտեցմամբ: Ռաֆֆին նկարագրում է 19-րդ դարի հայ հասարակության միջսերնդային փոխ-

---

* Հոդվածն ընդունվել է 21.01.20:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ս.գ.թ., դոցենտ Հ. Վերմիշյանը: 29.01.20:

հարաբերությունները հասարակական հարաբերությունների ողջ տիրույթում, ինչը սկզբունքային նշանակություն ունի հիմնախնդրի սոցիոլոգիական ըմբռնման դիտանկյունից:Հեղինակի վերլուծության առարկան հայ երիտասարդությունն է, որը հանդես է գալիս որպես համակարգ: Ավելին, Ռաֆֆին փաստարկում է 19-րդ դարի հայ երիտասարդության վերլուծության միջոցով տվյալ ժամանակաշրջանի հայ իրականության մեկնաբանման սկզբունքային հնարավորությունները՝ գտնելով, որ երիտասարդությունն այն «թարմ ուժն է», որը պայմանավորում է ազգի առաջընթացն ու ապագան»[4]: Հեղինակը դիտարկում է հայ երիտասարդության բնութագիրը՝ որպես ժամանակաշրջանի գնահատման ցուցիչ, ինչը հնարավորություն է ընձեռում վերհանել 19-րդ դարի հայ իրականության ախտորոշման հնարավորությունները հայ երիտասարդության՝ միջսերնդային փոխհարաբերություններով պայմանավորվող նկարագրի դուրսբերման ճանապարհով:

Համադրելով Ռաֆֆու և Կ. Մանհայմի տեսական մոտեցումները՝ դիտարկենք 19-րդ դարի հայ երիտասարդությունը՝ իբրև յուրահատուկ սոցիալական կոնստրուկտ՝ առանձնացնելով այն կառուցվածքային բնութագրերը, որոնք թույլ կտան հասկանալ ներսերնդային և միջսերնդային գործընթացների սոցիալական առանձնահատկությունները: Ըստ Մանհայմի՝ սերունդներն ունեն իրենց հատուկ կառուցվածքը, որն ապահովում է միջսերնդային փոխհարաբերությունները: Վերջիններս պայմանավորված են ներսերնդային կառուցվածքային - ստատիկ հիմքերով՝ «էնտելեխիաներով», որոնք պետք է հասկանալ՝ իբրև տվյալ սերնդի աշխարհընկալումները կերտող՝ ներսերնդային նպատակադրումներ[5]: Էնտելեխիաները սոցիալական պրակտիկաների այն հիմնարար միավորներն են, որոնք ձևավորում են ներսերնդային մտածողության հիմքերը՝ ծառայելով իբրև սերունդների կայուն գործառնման խթաններ: Էնտելեխիկ հիմքը կերտում է սերնդի արժեքորմատիվային համակարգի միջուկը, որն ապահովում է ինչպես գիտելիքի և փորձի փոխանակման հնարավորությունները սերունդների միջև, այնպես էլ՝ գիտելիքի և փորձի կուտակումը: Այսպիսով՝ Մանհայմի հայեցակարգումների համադրումը Ռաֆֆու մոտեցումներին հնարավորություն է տալիս բացահայտելու 19-րդ դարի հայաստանյան հասարակության միջսերնդային փոխազդեցությունների կառուցվածքը, ինչպես այդ ժամանակաշրջանի հայ երիտասարդության՝ որպես հարաբերականորեն առանձին սերնդի, այնպես էլ այլ սերունդների հետ փոխհարաբերությունների կառուցվածքային առանձնահատկությունների դուրսբերման միջոցով: Մասնավորապես այս տեսական համադրումը թույլ է տալիս դիտարկել 19-րդ դարի հայ երիտասարդության ներքին փոխազդեցությունները, ինչպես նաև պարզել վերջինիս ձևավորման և կայացման օրինաչափությունները միջսերնդային փոխազդեցությունների համատեքստում:

Հայ երիտասարդության բազմաբարդ բնույթը առավել ակներև է դառնում գյուղաբնակ և քաղաքաբնակ հայ երիտասարդության տարբերակման միջոցով: Այդ տարբերակումը հիմնվում է միջսերնդային փոխհարաբերությունների պոստֆիգուրատիվ և պրեֆիգուրատիվ տիպերի վրա, որոնք բնորոշում են երիտասարդության տարեց սերնդի հետ փոխհարաբերությունների բնույթը: Փոխհարաբերությունների պոստֆիգուրատիվ տիպում երիտասարդությունը կարևորում է տարեց սերնդի փորձն ու սոցիալականացման միջսերնդային ուղղվածությունը, իսկ պրեֆիգուրատիվի դեպքում երիտասարդությունը հիմնվում է բացառապես ներկայի վրա՝ հրաժարվելով նախկին փորձից ու նորմերից[6]: Այս համատեքստում խոսելով 19–րդ դարի գյուղաբնակ հայ երիտասարդության

մասին՝ անհրաժեշտ է նշել, որ այն միջսերնդային պոստֆիգուրատիվ հարաբերությունների արդյունք է: Այս համատեքստում գյուղաբնակ հայ երիտասարդությունը ձևավորվում և կայանում է ավանդական նորմերի հիմքով: Նյութական ոչ բավարար ապահովվածությունը ստիպում է երիտասարդությանն առավել շատ ժամանակ հատկացնել գյուղատնտեսական գործունեությանը, քան ուսմանը: Արդյունքում հասարակության մեջ գերակայում է առավելապես գյուղատնտեսական տիպի և ոչ թե կրթված երիտասարդությունը: Այսպիսի պայմաններում գյուղաբնակ հայ երիտասարդությունը չի կարող արագ զարգացում ապրել, քանի որ ճկուն չէ փոփոխվող գործընթացների նկատմամբ: Ինչ վերաբերում է քաղաքաբնակ հայ երիտասարդությանը, կարելի է նշել, որ այն միջսերնդային պրեֆիգուրատիվ հարաբերությունների արդյունք է, քանի որ հիմնվելով բացառապես ներկայի վրա՝ հրաժարվում է նախկին փորձից և նորմերից: Այն վերածվում է յուրահատուկ ենթամշակույթի, որի նյութական ապահովվածությունն անգամ չնայած հնարավորություն է տալիս ստանալ բարձրագույն կրթություն, բայց հիմնականում չի իրացվում հենց այդ նպատակներով[7]: Ահա սա է 19–րդ դարի հայ երիտասարդության փոխգործառնման առանցքային ձևը: Այստեղ գուղաբնակ և քաղաքաբնակ հայ երիտասարդությունը կարելի է դիտել իբրև մեկ սերնդի մեջ գործառող առանձին միավորների ամբողջություն, որոնք, պատկանելով միևնույն սոցիալ-պատմական տարածությանը, չեն կիսում արժեքորմատիվային միևնույն համակարգը: Սակայն ներսերնդային այս երկատվածությունն առավել հասկանալի է դառնում միայն այն ժամանակ, երբ քննության են ենթարկվում այդ հարաբերականորեն մեկուսացված ներսերնդային խմբերի կառուցվածքային հիմքերը՝ «էնտելեխիաները»: Ներսերնդային էնտելեխիկ կառուցվածքի հետազոտությունից պարզ է դառնում, որ գյուղաբնակ և քաղաքաբնակ հայ երիտասարդության էնտելեխիաները բնավ նույնական չեն, քանի որ առաջինի դեպքում էնտելեխիան կրում է առավելապես «պահպանողական», իսկ երկրորդի դեպքում՝ «ազատական» բնույթ: Ընդ որում, «պահպանողական» էնտելեխիան միջսերնդային պոստֆիգուրատիվ փոխհարաբերությունների վերարտադրողն է հանդիսանում, իսկ «ազատական» էնտելեխիան՝ պրեֆիգուրատիվ (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Գյուղաբնակ երիտասարդության ֆիգուրատիվ կառուցվածքը 19-րդ դարի հայ իրականությունում

Սակայն անհրաժեշտ է նշել, որ երիտասարդության այս խմբերը, չնայած տարբեր էնտելեխիկ հիմքերին, այնուամենայնիվ կազմում են մեկ միասնական սերունդ: Այն էնտելեխիաները, որոնք այդ սերունդների տարբերակման հիմքում են, կազմում են ընդհանուր էնտելեխիա կամ ընդհանուր հիմք, որը թույլ է տալիս միավորման եզրեր գտնել այս երկու կառուցվածքների միջև (տե՛ս գծապատկեր 2):

Միասնականության հնարավորությունը թույլ է տալիս դիտարկել երիտասարդությունը՝ իբրև միասնական սերունդ, տարեց սերնդի հետ փոխհարաբերությունների մակարդակում, ուր առաջ են գալիս այդ հարաբերությունների արդյունք հանդիսացող այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են մշակութային գործընթացներում նոր մասնակիցների առաջացումը, նախկին մասնակիցների հեռացումը, մասնակցությունը կոնկրետ պատմական գործընթացին սահմանափակ ժամանակամիջոցում, կուտակված մշակութային ժառանգության փոխանցումը և մի սերնդից մյուսին անցման անընդհատությունը [8]:



Գծապատկեր 2. Սերնդի էնտելեխիկ կառուցվածքը

Միջսերնդային փոխհարաբերությունները կրում են անընդհատ բնույթ. մշտապես տեղի են ունենում փորձի և հիշողության կուտակումներ: Հենց սա է պայմանավորում հայ երիտասարդության ձևավորումն ու կայացումը: Փորձի և հիշողության կուտակումը, որը կարելի է դիտել իբրև տարեց սերնդի կողմից երիտասարդ տարիքում կուտակված փորձ, կարող է ազդեցություն ունենալ տվյալ երիտասարդության ներկա փորձի վրա: Փորձի և հիշողության կուտակման աստիճանն ուղղակիորեն կախված է այն միջսերնդային փոխհարաբերությունների տիպից, որը որդեգրվել է փոխհարաբերվող սերունդների կողմից[9]:

Հարկ է նշել, որ պրեֆիգուրատիվ փոխհարաբերությունների պարագայում փորձի և հիշողության կուտակումը գտնվում է ցածր մակարդակի վրա, քանի որ տվյալ ժամանակաշրջանի երիտասարդությունը ժխտում է անցյալի փորձն ու նորմատիվային չափանիշները: Փորձի և հիշողության կուտակումները կարևորվում են նաև այն պատճառով, որ արդյունքում ստացված գիտելիքի կրումը երիտասարդությանը թույլ է տալիս ծավալել առավել ճկուն գործունեություն և զարգացնել առկա սոցիալական իրականության փոփոխվող բնույթին հարմարվելու ունակությունները[10]: Սա է այն հիմնարար եղանակը, որի միջոցով, ըստ Ռաֆֆու, հնարավոր կլինի լուծել սերունդների հերթափոխի անընդհատության ապահովման խնդիրը, ինչն առանձնակի հնչեղություն է ստանում ազգային-ազատագրական պայքարի ծավալման համատեքստում: Խոսելով ազգային-ազատագրական պայքարի՝ որպես հայի ինքնության պահպանման միջո-

ցի կարևորության մասին՝ Ռաֆֆին գրում է. «Ժողովուրդը ինքն է բողոք բարձրացնում, թե՛ զենքով և թե՛ խոսքով… դրան ասում ենք, թե ազատության զգացմունքը արմատիցն է ծագում, ամբոխի սրտիցն է բխում, ցածրից վեր բարձրանում» [11]:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ 19-րդ դարի քաղաքաբնակ և գյուղաբնակ հայ երիտասարդության հատվածներն իրենց հիմքում ունեն էնտելեխիկ հակադրություններ: Էնտելեխիաների այսպիսի հակադրությունները հաճախ դժվարացնում է երիտասարդության ներսերնդային կայուն փոխհարաբերման հնարավորությունները: Սակայն եթե դիտենք այդ հարաբերությունները սոցիալ-պատմական հոլովույթում, ապա ուրվագծվում են սերնդի միասնականության հիմքերը, որոնք կապվում են գոյապայքարի հրամայականի հետ: Սոցիալական դիրքի հետ կապվող էնտելեխիկ հակադրությունները փոխհատուցվում են խմբի գոյության ու ազգային ինքնության պահպանման առաջնահերթություններով: Այս միասնությունը թույլ է տալիս երիտասարդությանը միավորվել մեկ ընդհանուր էնտելեխիայի շուրջ, որի հիմքում ընկած են ազգային-էքզիստենցիալիստական և ազգային-ազատագրական գաղափարները: Դառնալ ազգային ինքնության և սեփական գոյության պահպանման մասնակիցը սա է այն ընդհանուր հենքը, որն, ըստ Ռաֆֆու, ընկած է ոչ միայն ազգային-ազատագրական պայքարի, այլև երիտասարդ սերնդի՝ իբրև միասնական սոցիալական միավորի գործառության հիմքում [12]: Այն հնարավոր է դառնում նաև շնորհիվ սերունդների միջև փորձի և հիշողության կուտակման, որը վերարտադրում և պահպանում է ազգային գիտակցությունը: Այդ վերարտադրության հիմքում երիտասարդ և տարեց սերունդների միջև փոխհարաբերություններն են, որոնք հիմնվում են էնտելեխիկ հարաբերությունների վրա: Վերջիններս շատ հաճախ հակասական են՝ պայմանավորված երիտասարդության և տարեց սերնդի էնտելեխիաների տարբերություններով: Միևնույն ժամանակ այդ տարբերությունները «սոսնձվում են» համասերնդային էնտելեխիկ հենքի՝ միասնական ազգային շահի գաղափարի հիմքով, որն ապահովում է հիշողության և փորձի կառուցողական կուտակումը: Այս դիտանկյունից ազգային-ազատագրական պայքարը կարող է դիտարկվել որպես սերունդները միավորող և նպատակադրված գործողությունները խթանող գործոն, որը հիմնվում է համազգային էնտելեխիկ հիմքի գիտակցման սկզբունքի վրա: Այս տրամաբանությամբ ազգային-ազատագրական պայքարը վերածվում է փուլային գործընթացների շղթայի, ուր առաջնային փուլը էքզիստենցիալ իրավիճակի գիտակցումն է, իսկ ավարտականը՝ առաջադիմական արդյունքը: Այստեղ երիտասարդությունը շարժվում է սեփական և փորձի համադրության ճանապարհով՝ զարգացնելով ներսերնդային և ազգային գիտակցությունը, որը դեռևս վաղ մանկության տարիքում սկսված սոցիալականացման արդյունք է: 19–րդ դարի հայ իրականության մեջ, ուր բացակայում է հայ ազգային պետականությունը, էլ ավելի է կարևորվում տարեց սերնդի և մասնավորապես ընտանիքի ազդեցությունը երիտասարդների ազգային ոգու և գիտակցության ձևավորման գործում: Տարեց սերունդն է դառնում այն սոցիալական միավորը, որը որդեգրելով որոշակի քաղաքականություն՝ նպաստում է ազգային գիտակցության ձևավորվորմանը: Այսպիսով սերունդների փոխհարաբերությունները վերածվում են սոցիալական փորձի և հիշողության կուտակման, սերունդների հերթափոխի բարդ գործընթացի: Գործընթաց, որում տարեց սերունդն առաջ է բերում նոր սերունդ՝ երիտասարդություն, որը, համադրելով տարեց սերնդի կուտակած անցյալի փորձն իր փորձի հետ, կառուցում է սեփական ինքնագիտակցությունը: Սա է այն ճանապարհը, որը զարգացնում է նոր սերնդի ազգային գիտակցությունը, դնում այն կառուցվածքային առավել բարձր մակարդակի վրա՝ նպաստելով վերջինիս հետագա վերարտադրմանը [13]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Վերմիշյան Հ.,** Հայ սոցիոլոգիայի պատմություն. XIX դարավերջ - XX դարասկիզբ, Երևան, 2013, էջ 16-25:
2. **Արծրունի Գ.,** Աշխատություններ*// հ.1, Թ., Մշակի խմբ., 1904:*
3. **Լալայան Ե.** , Ծիսական կարգերը հայոց մեջ*, Թ. տպ. Ն. Աղանեանի, 1913, էջ 63-67:*
4. **Ռաֆֆի,** Հայ կինը եւ հայ երիտասարդութիւնը*, Թիֆլիս, Արօր, 1890, 222 էջ:*
5. **Мангейм К.** “Проблема поколений” / «Кёльнский ежеквартальник по социологии», 1928 г, стр.16.
6. **Mead M.** “Culture and Commitment. A Study of the Generation Gap”. – New York, 1970, p.113.
7. **Ռաֆֆի,** Հայ կինը եւ հայ երիտասարդութիւնը*, Թիֆլիս, 1890, էջ 75-170:*
8. **Мангейм К.** “Проблема поколений” / «Кёльнский ежеквартальник по социологии», 1928 г, стр.13-19.
9. **Там же,** стр.32-33:
10. **Там же,** стр.35-36.
11. **Ռաֆֆի,** Դեռեւս ուշ չէ, Բանասիրական, «Մշակ» -41, Թիֆլիս, 15 մարտ 1878, էջ1:
12. **Սարուխանյան Ն.,** *Ռաֆֆին և հայկական հարցը, Պատմաբանասիրական հանդես*, № 3, 2015, էջ 99-107:
13. **Մակարյան Լ. Բ.,** Ռաֆֆին որպես ազգային-ազատագրական շարժման գաղա-փարախոս, Բանբեր Երևանի համալսարանի 3 (69),1989թ., էջ 159-164:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Հայ երիտասարդությունը» կամ 19-րդ դարի հայաստանյան հասարակության միջսերնդային փոխազդեցությունների կառուցվածքը՝ ըստ Ռաֆֆու

Սոնա Սաղաթելյան, Վահան Ենգիդունյան

Իրականացված աշխատանքում համադրելով Ռաֆֆու հայ երիտասարդության բնութագրումները և Կ. Մանհայմի սերնդային փոխհարաբերությունների սոցիոլոգիա-կան հայեցակարգման մոտեցումները, դիտարկելով 19-րդ դարի հայ երիտասարդութ-յան էնտելեխիկ կառուցվածքը՝ պարզ է դառնում վերջինիս գործառման առանձնա-հատկությունները միջսերնդային փոխհարաբերությունների համատեքստում: Մասնա-վորապես, առաջ է քաշվում թեզն առ այն, որ 19-րդ դարի հայ երիտասարդության շրջանում միջսերնդային ֆիգուրատիվ հարաբերությունների տարբեր տիպերի որդեգ-րումը ներսերնդային էնտելեխիկ երկատվածության արդյունք է: Արդյունքում պարզ է դառնում ժամանակի սոցիալ-պատմական համատեքստում այլընտրանքային համա-սերնդային էնտելեխիայի առկայությունը, որը հիմնվում է ազգային շահի առաջնահեր-թության գիտակցման վրա և թույլ է տալիս սերունդներին միավորվել գոյաբանական պայքարի շուրջ:

РЕЗЮМЕ

«Армянская молодежь», или структура межпоколенческого взаимодействия в армянском обществе в XIX веке по Раффи

Сона Сагателян, Ваан Енгидунян

Ключевые слова: нация, национально-освободительная борьба, поколение, молодежь, энтелехия, опыт, память.

Проведя анализ работы Раффи «Армянская женщина и армянская молодежь» с помощью теоретических подходов К. Мангейма, связанных с выявлением структурных особенностей внутрипоколенческих и межпоколенческих отношений, и в частности, проводя анализ энтелехической структуры армянской молодежи XIX века с целью выявления особенностей функционирования армянской молодежи в контексте межпоколенческих отношений, становится ясно, что среди армянской молодежи 19-го века наблюдается внутреннее энтелехическое раздвоение, которое является результатом принятия различных типов фигуральных отношений между поколениями. В то же время, принимая во внимание социальный контекст отношений между поколениями в армянской реальности XIX в., становится понятным существование единой энтелехической основы, национальной энтелехии, которая, формируя общую ценностно-нормативную систему, объединяет поколения в борьбе за независимость.

SUMMARY

“The Armenian Youth” or the Structure of Intergenerational Interactions in the Armenian Society in the XIX Century According to Raffi

Sona Saghatelyan, Vahan Engidunyan

Keywords: nation, national liberation struggle, generation, youth, statics, dynamics, entelechy, experience, memory.

Conducting an analysis of Raffi's "The Armenian Woman and the Armenian Youth" work through Mannheim's theoretical approaches linked to the discovery of structural features of intragenerational and intergenerational relationships, in particular, a study of entelechic structure of the Armenian youth of the 19th century becomes clear that among the Armenian youth of the 19th century there is an intragenerational partition, which is the result of the adoption of different types of intergenerational figurative relations. At the same time, taking into account the social context of the intergenerational relations of the 19th century, the existence of a common entelechic basis, the existence of a national entelechy, which, by forming a common value-normative system, allows the unity of generations in the struggle for a national liberation becomes clear.